

ԱԿԱՆԱՎՈՐ ԲՅՈՒՉԱՆԴԱԳԵՏԸ

Ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի հիշատակին*

Համաշխարհային բյուզանդագիտությունն ու հայագիտությունը ծանր կորուստ կրեցին: 2011 թ. օգոստոսի 17-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց նշանավոր պատմաբան, Հունաստանի և Իտալիայի բազմաթիվ գիտական կաճառների անդամ, Հայաստանի Հանրապետության ԳԱԱ ակադեմիկոս **Հրաչ Բարթիկյանը**:

Նրա գիտական ուսումնասիրություններն անանց արժեք են ինչպես համաշխարհային բյուզանդագիտության, այնպես էլ հայագիտության համար, ուստի Հրաչ Բարթիկյանի նման լայն հետաքրքրությունների տեր գիտնականի բացակայությունը դեռ երկար է զգալու գիտնականների ներկա սերունդը:



Հրաչ Միրայելի Բարթիկյանը ծնվել է 1927 թ. Աթենքում, քանասեր-հրապարակախոս Միրայել Բարթիկյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Կեդի հայկական վարժարանում, իսկ 1945 թ. ավարտել է հունական գիմնազիան: Երկրորդ աշխարհամարտից հետո սկիզբ առած հայրենաստորչության ալիքի հետ միասին՝ 1946 թվականին, նա ներգաղթել է Հայաստան: 1953 թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի

պերական համալսարանի պատմության ֆակուլտետը՝ Հրաչ Բարթիկյանն իր ուսումնառությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ընթացել է Լենինգրադում՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ: 1958 թ. Լենինգրադի պերական համալսարանում պաշտպանել է փեկնածուական արեւնախոսություն «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները» թեմայով, որը ռուսերենով լոյս է տեսել Երևանում՝ 1961 թվականին: 1971 թ. Հրաչ Բարթիկյանը պաշտպանել է դոկտորական արեւնախոսություն «Բյուզանդական Գիզենիս Ալրիպաս Էպոսը և նրա նշանակությունը հայագիտության համար» թեմայով: Այս արժեքավոր աշխատությանը փարիներ անց կցվեց «Վասիլ Գիզենիս Ալրիպաս» էպոսի՝ նրա հեղինակած թարգմանությունը (1978 թ.):

*Ընդունվել է տպագրության 14.09.2011:

Գ. (Թ.) Կարի, քիվ 3 (35) հունիս-սեպտեմբեր, 2011 ՎԵՄ համահայկական համերկ

1957 թվականից աշխատելով ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում, 1980-2010 թթ. Հրաչ Բարթիկյանը ղեկավարել է Միջին դարերի պատմության բաժինը, եղել է գլխավոր գիտական աշխատող, պատրասարել է բազմաթիվ գիտական կադրեր:

Իր ծանրակշիռ վաստակի համար Հրաչ Բարթիկյանը 1980 թ. ընտրվել է **Արևելքի ակադեմիայի**, 1987 թվականին՝ **Հռոմի «Տիբերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի**, իսկ 1996 թվականին՝ **ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի** իսկական անդամ: 1995 թվականից նա նաև **Հայաստանի գրողների միության** անդամ էր:

1981 թվականին Հրաչ Բարթիկյանը դարձել է Հունաստանի **«Բյուզանդական հեղափոխությունների ընկերության»**, ապա՝ **«Հունական քաղաքակրթության հասարակության»** պատվավոր անդամը: Նրան շնորհվել է նաև **Մալոնիևի Արիստոտելյան համալսարանի Արիստոտելի անվան մեդալ**:

«Հայ-բյուզանդական հեղափոխություններ» հոդվածների երկհատոր ժողովածուի համար 2004 թ. Հրաչ Բարթիկյանն արժանացել է **ՀՀ նախագահի մրցանակի**: Այդ ժողովածուն ներառում է հայերեն, հունարեն, ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով՝ շուրջ մեկ տասնյակ երկրներում և երկու տասնյակ հեղինակավոր հրատարակչություններում հեղինակի լույս ընծայած 131 հոդված: Ժողովածուն 2006 թ. համալրվեց երրորդ հատորով, որը ներառում է ծավալուն և արժեքավոր փաստ հոդված՝ հայերեն և ռուսերեն:

Հրաչ Բարթիկյանը հեղինակել է 17 գիրք և շուրջ 150 գիտական հոդված: Նա Հայոց պատմության ակադեմիական նոր բազմահատորյակի խմբագրական խորհրդի անդամ էր, երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը:

Ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի հետազոտությունների ծանրակշիռ մասը նվիրված է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը, որն իր իսկ իրավացի դիտարկմամբ՝ Հայոց պատմության կարևորագույն ճյուղերից է: Նա մանրագնին կերպով քննել է այդ հարաբերությունների թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր-եկեղեցական տեսանկյուններին առնչվող հիմնահարցերը: Այս բնագավառում Հրաչ Բարթիկյանի ներդրումն ավելին է, քան մասնագետ-հետազոտողինը: Նա շեշտակիորեն ընդլայնեց խնդրո առարկա հարաբերությունների աղբյուրագիտական հենքը՝ հունարենից հայերեն թարգմանելով բյուզանդական աղբյուրների մի ամբողջ շարք: ՀՀ ԳԱԱ հրատարակչությամբ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ» մատենաշարով Բարթիկյանը հրատարակել է **Պրոկոպիոս Կեսարացու** (1967), **Կոստանդին Ծիրանածինի** (1970), **Հովհաննես Սկիլիցեսի** (1979), **Թեոփանես Խոստովանողի** (1983), **Թեոփանեսի Շարունակողի** (1990) աշխատությունները: Նա աշխարհաբարով հրատարակել է 12-րդ դարի հայ պատմիչ **Մատթեոս Ուռնայեցու** «Ժամանակագրությունը» (1973): Ավելին, Բարթիկյանի թարգմանությամբ լույս են տեսել նաև Հայաստանի առաջին Հանրապետության տարիների հայ-հունական հարաբերություններին առնչվող հունարեն արխիվային փաստաթղթեր: Հիշյալները զուտ թարգմանություններ չեն. դրանք հարստացված են նրա հեղինակած հարուստ առաջաբաններով և մանրամասն ու արժեքավոր ծանոթագրություններով, որոնց լավագույն գիտակներից էր Հրաչ Բարթիկյանը:

Ընդգրկուն է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանն առնչվող հիմնահարցերի շրջանակը, որոնց անդրադարձել է գիտնական-հետազոտողը: Դրանք տասնյակների հասնող գիտական թեմաներ, գիտության տարբեր բնագավառներ և ուղղություններ են:

Հրաչ Բարթիկյանի վաղ շրջանի հետազոտությունները գերազանցապես վերաբերում են պավլիկյան շարժմանը¹: Հետաքրքրական է, որ նա ուսումնասիրության նյութ չդարձրեց շարժման ամբողջական պատմությունը և ընտրեց այլ մտեցում. նախ՝ առանձին ուսումնասիրեց շարժմանը վերաբերող թե՛ հայկական և թե՛ բյուզանդական սկզբնաղբյուրները: Դա հնարավորություն տվեց հեղինակելու ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որոնցում հայ և օտարալեզու աղբյուրների համադիր քննությամբ ներկայացվեցին պավլիկյան շարժմանը վերաբերող բազում հիմնահարցեր: Այսպես, ճշգրտվեց շարժման սկզբնավորման ժամանակաշրջանը: Բարթիկյանը սրբագրեց հայագիտության մեջ մինչ այդ ընդունված տեսակետը, ըստ որի՝ հայոց մեջ պավլիկյան շարժումը սկզբնավորվել է դեռևս 6-րդ դարում: Հեղինակը ցույց տվեց, որ պավլիկյանների գաղափարները Հայաստանում գոյություն են ունեցել մինչև շարժման ձևավորումը, սակայն զարգացել և լայնորեն տարածվել են հենց նրա միջոցով: Բարթիկյանի փաստարկմամբ՝ շարժումը, աղանդավորական և սոցիալական լինելով հանդերձ, հայերիս համար կրել է նաև ազատագրական պայքարի բնույթ:

Ի դեպ, Հրաչ Բարթիկյանն առաջինն էր, ով հանգամանորեն ներկայացրեց պավլիկյան համայնքի կազմակերպության հիմնահարցերը: Շարժմանն առնչվող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից զատ, նա պավլիկյանների պատմության աղբյուրագիտական հենքը հարստացրեց բյուզանդացի 11 հեղինակներից կատարված հայերեն հատվածական թարգմանություններով և դրանց կցված արժեքավոր ծանոթագրություններով²: Ավելին, Վատիկանի Առաքելական գրադարանի 17-րդ դարի հեղինակ **Անանունի** և 19-րդ դարի 50-ական թվականներին Ֆիլիպուպոլսում (Ֆիլիպե, այժմ՝ Պլովդիվ) Ռուսաստանի հյուպատոս **Ն. Գերովի** տեղեկությունների հիման վրա, Բարթիկյանը հրապարակեց պավլիկյանների՝ արդեն նոր ժամանակների պատմությանն առնչվող ուշագրավ փաստեր³:

Առանձնակի կարևոր են Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության վերաբերյալ նրա ուսումնասիրությունները, որոնցում պատշաճ կերպով գնահատվել են այդ քաղաքականության թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը: Բարթիկյանի իրավացի դիտարկմամբ՝ Բյուզանդիան Հայաստանին տիրեց կայսրություններին հատուկ երեք միջոցների գործադրմամբ՝ բացահայտ ագրեսիա, «բաժանիր որ տիրես» հին հռոմեական ռազմաքաղաքական սկզբունք և պետական ահաբեկչություն⁴:

Հրաչ Բարթիկյանը պատմաբանին հատուկ իրատեսությամբ հստակ տարբերակում է մտցրել **հայոց պետականության** և **հայ ժողովրդի** հանդեպ Բյուզանդիայի վարած քաղաքականության մեջ: Եթե **առաջինի** նպատակը պետական իշխանության վերացումն էր, ապա **երկրորդի** դեպքում ամենևին էլ հայերին

1 Տե՛ս Бартияян Р., Источники для изучения истории павликианского движения. Е., 1961, Պավլիկյանների առասպելական ծագումը, ըստ հին բուլղարերեն մի ձեռագրի, ՅՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, N 1, 1957, Պավլիկյանների շարժման մի քանի աղբյուրների գնահատման շուրջ, ՅՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, N 6, 1957: Պավլիկյան շարժմանը վերաբերող հեղինակի մյուս հոդվածները տե՛ս «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Բ, եր., 2002:
 2 Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդական աղբյուրները պավլիկյան շարժման մասին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, եր., 2002, էջ 417–492:
 3 Տե՛ս Վատիկանի Առաքելական գրադարանի XVII դարի Անանունը և Ֆիլիպուպոլսում Ռուսական կայսրության հյուպատոս Ն. Գերովը Բուլղարիայի հայության և պավլիկյանների մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1998, N 3, էջ 3–16:
 4 Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X–XI դդ., «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 673:

ուծացները, ասել է թե՛ հույն դարձները չէր, ինչը Բարթիկյանը լիարժեքորեն ապացուցել է անառարկելի փաստերի միջոցով⁵: Ըստ նրա՝ Բյուզանդիայի տիրապետության դրական կողմը բյուզանդական քաղաքակրթության բարենպաստ ազդեցությունն էր հայկական մշակույթի տարբեր բնագավառների վրա: Կարելի է մատնանշել, օրինակ, թարգմանական գրականությունը, որը բուռն զարգացում ապրեց հատկապես վաղ միջնադարում: Անգամ հայ-բյուզանդական դավանաբանական պայքարը նպաստեց հայ փիլիսոփայական մտքի և գիտական բանավեճի (պոլեմիկայի) զարգացմանը:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների պատմությանը նվիրված՝ Բարթիկյանի հետազոտությունները: Գլխավորապես անդրադառնալով կողմերի եկեղեցական փոխհարաբերություններին՝ նա լիովին բացահայտել է դրանց քաղաքական ծալքերը: Ինչպես հայտնի է, Քաղկեդոնի 451 թ. եկեղեցական ժողովի մերժումով հայ ժողովուրդն առանձնացավ հունադավան եկեղեցուց՝ այդպիսով ընդգծելով ոչ միայն իր հոգևոր, այլև քաղաքական ինքնուրույնությունը: Սակայն թե՛ Բյուզանդական կայսրության և թե՛ Կիլիկյան Հայաստանի 12–14-րդ դարերի աշխարհաքաղաքական իրավիճակը նպաստեց, որպեսզի եկեղեցիների միության խնդիրը վերադառնա նրանց փոխհարաբերությունների օրակարգ: Այս առնչությամբ է, որ դեռևս 12-րդ դարի կեսերից Ամենայն Հայոց կաթողիկոսների և բյուզանդական իշխանավորների միջև սկսվում են ակտիվ բանակցություններ, որոնց վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նրանց փոխանակած նամակներում: Խորանուխ լինելով դրանց ուսումնասիրությանը՝ Բարթիկյանը արձանագրել է, որ եկեղեցիների միության շուրջ բանակցությունները գերազանցապես թելադրված էին կողմերի քաղաքական և տնտեսական շահերով: Հետաքրքրական է, որ այն նամակները, որոնցում խոսվում էր եկեղեցիների միությանը հայկական կողմի տված համաձայնության մասին, հայ իշխանավորները ոչնչացնում էին՝ չպահպանելով անգամ դրանց բնագրերը: Նրանք, ինչպես իրավագիտորեն նկատում է Բարթիկյանը, «չէին կարող լայն հասարակության, ճիշտ կլիներ ասել՝ քաղաքականությունից եւ դիվանագիտությունից հեռու կանգնած ամբոխին տեղյակ պահել այդ նամակների բովանդակությանը»⁶: Հրաչ Բարթիկյանը այդ նամակների գրելաոճից անգամ ուշագրավ եզրակացությունների է հանգել թե՛ Բյուզանդիայի և թե՛ Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական դրության վերաբերյալ: Այսպես, եթե նամակներն ունեցել են պարտադրող տոնայնություն, նշանակում է, տվյալ պահին Կիլիկիայի քաղաքական դրությունը նկատելիորեն ծանր է եղել: Սինչդեռ, բարեկամական, անգամ շողոքոք բովանդակությամբ նամակները վկայում են, որ կայսրությունը մեծապես շահագրգռված է եղել հայերի հետ դաշնակցությամբ:

Հրաչ Բարթիկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում առանձնահատուկ տեղ էր գրավում առանձին մասնագիտացում պահանջող՝ պատմագիտության օժանդակ գիտակարգերից մեկը՝ **վիմագրագիտությունը**: Իրեն հատուկ բծախնդրությամբ նա հավաստիորեն վերծանել և մեկնաբանել է շատ վիմագիր արձանագրություններ, մասնավորապես՝ դրանց մութ թվացող

5 Տե՛ս Բարթիկյան Ռ., Բյուզանդիան և հայ պետականությունը X–XI դդ., մույս տեղում, էջ 673–678:

6 Բարթիկյան Ռ., Կիլիկյան Հայաստանի և բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 643:

եզրույթները: Այս հարցում Բարթիկյանին մեծապես օգնում էր հին հունարենի հրաշալի իմացությունը: Ի դեպ, նա առաջինը վերծանեց Գառնիի հունարեն արձանագրությունը: Դրանով փաստվեց Մովսես Խորենացու այն վկայությունը, ըստ որի՝ հայոց Տրդատ Ա թագավորն իր քրոջ՝ Խոսրովադուխտի համար Գառնիում կառուցել է ամառային պալատ ու ամրոց և այդ մասին հիշատակություն բողել Գառնիի հունարեն արձանագրության մեջ⁷:

Արժեքավոր են **շիրակացիագիտությանը** նվիրված Բարթիկյանի ուսումնասիրությունները: Այս բնագավառում գիտնականի հետազոտության առաջին արդյունքը «Յաղագս ամպոց և նշանաց» երկի իսկական հեղինակի հայտնաբերումն էր: Նա ցույց տվեց, որ այն սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն, և որ դրա իսկական հեղինակն անտիկ աշխարհի բանաստեղծ **Արատոս Սոլացին** է⁸: Այս ուղղությամբ Բարթիկյանի հաջորդ բացահայտումը վերաբերում է Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրությանը», որը, նրա փաստարկմամբ, հիմնականում կազմված է հունարենից կատարված թարգմանություններից, իսկ աշխատության ամենահավանական թարգմանիչն ու ինքնուրույն էջերի հեղինակը Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից **Փիլոն Տիրակացին** է⁹:

Գիտության անխոնջ մշակի առաքելությանը Հրաչ Բարթիկյանը հավատարիմ մնաց իր ողջ կյանքում: Կյանքի վերջին տարիներին նա կրկին ձեռնամուխ եղավ հունարեն աղբյուրների թարգմանությանը՝ հայագիտությանը ժառանգելով Կեսարիայի մետրոպոլիտ **Պարթենիոս Աթենացու**՝ Երուսաղեմի Սուրբ վայրերի պատկանելության շուրջ հայ և հունդավան եկեղեցիների տարաձայնություններին վերաբերող «Պատմություն հայոց և հունաց տարաձայնության» (2008) և **Միքայել Ատտալիաստսի**՝ 11-րդ դարի հայոց քաղաքական կյանքին առնչվող «Պատմության» հայերեն թարգմանությունները: Պարթենիոս Աթենացու երկի թարգմանությունը գիտականից գատ, հայոց համար, մասնավորապես, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի պատկանելությանն առնչվող հայ և հույն համայնքների երկարատև տարաձայնությունների հարթեցման առումով, ունեցավ ծանրակշիռ նշանակություն: Դրա առիավատչյան Երուսաղեմում Չատկի տոնի 2011 թ. ծխակատարության անցկացումն էր՝ առանց հայ և հույն հոգևորականների ընդհարման:

Մահվանից օրեր առաջ Բարթիկյանն ավարտեց նաև **Իոաննիս Կ. Խասիոսիսի** «Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ 1876–1996 թթ.» աշխատության թարգմանությունը՝ հմտալից ծանոթագրություններով:

Նա հասցրել է ավարտել նաև «Հայերը Բյուզանդիայում» կոթողային աշխատության շարադրանքը, որը, սակայն, գտնվում է ձեռագիր վիճակում:

Հիրավի, ընդգրկուն է ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի ուսումնասիրությունների տպագրության աշխարհագրությունը՝ Երևան, Ս. Էջմիածին, Լոնդոն, Փարիզ, Լիսաբոն, Աթենք, Թեսալիկոն, Նիկոզիա, Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Մոֆիա, Բուխարեստ և այլ վայրեր:

7 Տե՛ս Բարթիկյան Գ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 151:

8 Տե՛ս Դարձյալ Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ամպոց եւ նշանաց» աշխատության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 4, էջ 134-150:

9 Տե՛ս Բարթիկյան Գ., Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջ, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 206:

Հրաչ Բարթիկյան քաղաքացուն և գիտնականին բնորոշ էին ուղղամտությունն ու սկզբունքայնությունը, հոգատար վերաբերմունքը գիտնականների թրիտասարդ սերնդի նկատմամբ: Նա ապրում էր դժվարությամբ վերագտած հայրենիքի հոգսերով, ուրախանում հաջողություններով: Լինելով արտասահմանյան բազմաթիվ գիտական կաճառների անդամ, Հայաստանի անկախացումից հետո՝ դժվարին տարիներին, երկիրը լքած բազմաթիվ հայրենադարձների մեծ, Հրաչ Բարթիկյանը նույնպես կարող էր վերադառնալ օտար ավեր, սակայն նախընտրեց մնալ հայրենիքում, կիսել հարազատ երկրին բաժին ընկած դժվարությունները և ապրել գոյատևման համար մաքառող հայ գիտնականի չարքաշ կյանքով:

Ականավոր բյուզանդագետի և հայագիտության անխոնջ մշակի գիտական ժառանգությունը լիարժեքորեն գնահատելու համար պատմաբանների ներկա սերնդից դեռ երկար ժամանակ ու բազում ջանքեր է պահանջվելու: Համոզված ենք, որ առաջիկայում Հրաչ Բարթիկյանի գիտական վաստակի համակողմանի քննության հարցը պետք է դառնա առանձին և շատ ավելի լայնածավալ ուսումնասիրության առարկա:

Վահե Հ. Թորոսյան
Պատմ. գիտ. թեկնածու

PROMINENT BYUZADOLOGUE

In memory of academician Hrach Bartikyan

Vahe H. Torosyan